

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԸՄԲՈՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐ

Վ. Է. ՍԱՀԱԿՅԱՆ

Հասարակության սոցիալական կառույցի փոխակերպման մեկնաբանությունների շուրջ և առհասարակ դրանց «շարժիչ ուժերի» կամ դրանք առաջ բերող պատճառների մասին գիտական գրականության մեջ հանդիպում է կարծիքների լայն բազմազանություն: Այդ շարքում են գոյության համար անհրաժեշտ միջոցների արտադրությունը (Լեմսկիներ), արտադրահարաբերությունները (Մարքս), աշխատանքի բաժանումը (Դյուրկհեյմ), հասարակական կապերի մեծացումը (Թյոնիս), հասարակության մեջ ռացիոնալության աճը (Վեբեր) և այլն: Համաձայն այս տեսակետների՝ առաջարկվում են հին և նոր հասարակությունների մի շարք դասակարգումներ, որոնք ընդհանուր առմամբ կարելի է խմբավորել երկու մեծ տիպերում՝ համայնական և քաղաքացիական, որոնց տարբերակումը սաղմնային ձևով տրված է Ֆ. Թյոնիսի՝ գեմայնչաֆտի (համայնական կապեր) և գեզելչաֆտի՝ (հասարակական կապեր) տիպերում: Ըստ Թյոնիսի՝ հին հասարակություններում գերիշխում են համայնական տիպի կապերը՝ իրենց դրսևորումն ունենալով ազգակցական-արյունակցական, ընկերական, հարևանական հարաբերություններում, իսկ նոր հասարակություններում՝ հասարակական-ընկերակցական կապերը, որտեղ առաջնայինը անձնական շահն է՝ Ներկա հողվածում քննարկելու ենք համայնական հասարակության սոցիոլոգիական ըմբռնումները՝ մի կողմ թողնելով քաղաքացիական հասարակությունները:

Մինչև համայնական հասարակության սոցիոլոգիական բովանդակության բացահայտման անցնելը, սակայն, հարկ է ճշգրտել այն սահմանը, որը կարելի է պատմականորեն և, անշուշտ, պայմանականորեն դնել այս երկու տիպի հասարակությունների միջև:

Գիտական գրականության մեջ որպես այդ «բեկման սահման» գրեթե բոլոր հեղինակներն ընդունում են արդյունաբերական հեղափոխությունը: Այսպես. նույն Թյոնիսի գեմայնչաֆտն ու գեզելչաֆտը, Դյուրկհեյմի մեխանիկական և օրգանական համերաշխությամբ հասարակությունները, Վեբերի ավանդական և ռացիոնալ հասարակություններն ըստ էության արտացոլում են հասարակական կյանքի այս կամ այն առանձնահատկությունները արդյունաբերական հեղափոխությունից առաջ կամ հետո: Այնուամենայնիվ, արդյունաբերական հեղափոխությունը որպես հիմնական նախադրյալ հանդես եկավ միայն քաղաքացիական հասարակությունների առաջացման համար: Իրավամբ հարց է ծագում. որո՞նք են համայնական և քաղաքացիական հասարակությունների սոցիոլոգիական ուսումնասիրման և զննահատման առանձնահատկությունները:

Համայնական հասարակություններ: Համայնքայի՞ն, համայնավարակա՞ն, թե՛ համայնական հասարակություններ. առօրեական գիտակցության տեսանկյունից հավանաբար մեծ սխալ գործած չենք լինի, եթե գործածենք այս հասկացություններից որևէ մեկը կամ հավասարապես բոլորը, սակայն բովանդակային-մեթոդաբանական առումով չենք կարող խույս տալ բազմիմաստության և բազմանշանակության տրամաբանական հակասություններից: Ուստի

¹ Տե՛ս F. Tönnies, *Gemeinschaft und Gesellschaft*, Leipzig, 1935:

² «Համայնք» և «հասարակություն» հասկացությունները ներկայացնում են գերմաներեն «Gemeinschaft» և «Gesellschaft» հասկացությունների թարգմանությունները. սակայն դրանց հայերեն համարժեքները քիչ այլ իմաստ են հաղորդում այն նշանակություններին, որ տալիս է Թյոնիսը: Այդ առումով, «համայնք» և «հասարակություն» հասկացությունները տվյալ ենթատեքստում պետք է հասկանա ոչ թե որպես սոցիալական կապերի ամբողջություն, այլ դրանց հատուկ տիպ: Տե՛ս «История теоретической социологии. Социология XIX века (Профессионализация социально – научного знания)», М., 1998, էջ 315:

համարել: «Համայնք» հասկացությունը բովանդակային առումով կարող է ունենալ մի շարք երանգներ՝ կապված տարբեր ենթատեքստերի հետ: Այսպես, «համայնք» ասելով կարելի է հասկանալ թե՛ փոքր գյուղակ, որտեղ բոլորը գիտեն յուրաքանչյուրին և յուրաքանչյուրը՝ բոլորին, և թե՛ մի քանի միլիոն բնակչությամբ արդյունաբերական հասարակության մետրոպոլիս, որտեղ համայնքի մասին պատկերացումները կարող են առաջ բերել միայնակության ու օտարվածության զգացումներ:

«Համայնք» տերմինն այսօր օգտագործվում է նաև այլ բնագավառներում՝ անձնական, մշակութային, քաղաքական, աշխարհագրական, ազգային և այլ ոլորտներում տարբեր բնորոշումներով: «Համայնք» հասկացությունը (ոուներեն՝ *община*, անգլերեն՝ *community*) գիտական գրականության մեջ առաջին անգամ սկսել է ուսումնասիրվել 19-րդ դարի կեսերից: Խորհրդային գրականության մեջ «համայնք» ասելով հասկացվում էր սոցիալական կոլեկտիվ, որը բնորոշ էր «գլխավորապես նախնադարյան-համայնական հասարակարգին, բայց պահպանվում է» «նաև դասակարգային հասարակություններում» և դիտվում էր հիմնականում որպես սեփականության, մասնավորապես հողատիրության ձև: «Համայնք» հասկացությունն անհամեմատ ավելի լայն գործածություն ունի արևմտյան գրականության մեջ, ընդ որում, հաճախ տրվում են տարբեր սահմանումներ, որոնցից առավել տարածվածներն են՝

1. «Համայնքը մարդկանց մշտական խումբ է, որն զբաղեցնում է ընդհանուր տարածք, որի անդամները փոխազդում են և ունեն նույնության զգացում ամբողջի նկատմամբ, ինչը ծագում է այդ փոխազդեցությունից»⁹:

2. «Համայնքը սոցիալական այնպիսի միավորումների և համակարգերի միասնությունն է, որոնք, ունենալով տեղային հարմարություն, կատարում են հիմնական սոցիալական ֆունկցիաներ»¹⁰:

3. Համայնքը սոցիալական համակարգի այնպիսի տիպ է, մարդկանց այնպիսի խումբ, որի անդամները միավորված են մշտական կանոնավոր փոխազդեցությունների միջոցով, և որը տարբերվում է անդամներին միավորող կապերի անձնական և հուզական բնույթով¹¹:

4. Համայնքը սոցիալական այնպիսի միավորում է, որի անդամներն ունեն որոշակի ընդհանուր արժեքներ, ծառայություններ, ինստիտուտներ, շահեր կամ աշխարհագրական մոտիկություն¹²:

Վերոհիշյալ սահմանումներում նկատելի է համայնքի սահմանման երկու հիմնական մոտեցում, որոնցից առաջինի դեպքում որպես համայնքի բնութագրիչներ կարելի է առանձնացնել. ա) ընդհանուր տարածքում ապրող և փոխազդող մարդկանց խումբ, որոնք ունեն համայնքին պատկանելիության զգացում, բ) սոցիալական համակարգ, որն ունի ենթահամակարգեր և միավորներ, որոնք բավարարում են համայնքի անդամների սոցիալական և տնտեսական կարիքները, գ) մարդկանց միջև անձնական և հուզական կապերի առկայություն: Երկրորդ մոտեցումը համայնքը բնութագրում է ոչ միայն աշխարհագրական, այլև սոցիալ-հոգեբանական միասնությամբ, որտեղ միասնության հիմք կարող են լինել շահերը, արժեքները, ինստիտուտները և այլն (օրինակ՝ «մասնագիտական համայնք», «կրոնական համայնք», «սիլոտքի հայ համայնք» և այլն): Այլ խոսքով՝ համայնքը կարող է հանդես գալ և՛ որպես խմբային հանրություն, և՛ որպես զանգվածային հանրություն¹³: Քանի որ «համայնք» հասկացությունը ներկա հողվածում

⁹ St' u Robert M. MacIver, *Community*, London, 1917, էջ 244:

¹⁰ St' u "Большая советская энциклопедия", т. 30, М., 1954, էջ 435-437:

¹¹ Francis E. Merill, *Society and Culture: An Introduction to Sociology*, Third Edition, New Jersey, 1965, p. 429.

¹² *Strategies of Community Organization: A Book of Readings*, Third Edition, Ed. by Fred M. Cox, John L. Erlich, John E. Tropicman, Illinois, 1979, p. 224-225.

¹³ St' u J. F. Longres, *Human's Behaviour in Social Environment*, Illinois, 1998, էջ 71:

¹⁴ St' u Robert M. MacIver, նշվ. աշխ., R. Edwards, *Encyclopedia of Social Work*, Part I, Washington, 1995:

¹⁵ Մի շարք հատկանիշների հիման վրա սոցիալական հանրություններում առանձնացվում են խմբային և զանգվածային հանրություններ: Խմբային հանրություններն իրենցից ներկայացնում են անհատների համախմբություններ, միավորումներ, որոնց բնորոշ են՝

ա) օրգանական բնույթ (ամբողջականության տիպ, որն օժտված է ներքին կառուցով և այդ պատճառով չի համընկնում նրա մեջ մտնող տարրերի պարզ գումարին),

ուսումնասիրվում է այնքանով, որքանով այն հանդես է գալիս որպես հասարակության որոշակի տիպի կառուցվածքային միավոր, ուստի այսուհետև գործածվելու է խմբային հանրության իմաստով: Ասե՛ք մե՛ս, որ մի շարք երկրներում այն հանդես է գալիս որպես տարածքային-վարչական միավոր, որը սվյալ դեպքում դուրս է մեր հետաքրքրությունից:

Այսպիսով, համայնքը խմբային այնպիսի հանրությունն է, որի անդամներն զբաղեցնում են ընդհանուր տարածք և միավորված են մշտական կառուցված փոխազդեցություններով, և որն այլ մե՛սն հանրություններից տարբերվում է անդամներին միավորող կապերի անձնական ու հուզական բնույթով: Պատմական զարգացման գործընթացում համայնքը հանդես է գալիս տարբեր ձևայնացումներով՝ ընտանեկան, հարևանական, գյուղական և այլն, որոնց քննարկումը սույն հոդվածի շրջանակներում մի կողմ է թողնված:

Համայնքներում անձնական և հուզական բնույթի կապերն արտացոլում են անդամների միջև արյունակցական-ազգակցական, հարևանական և ընկերական գերակա կապերը: Որպես ընդհանուր տարածքում մշտական փոխազդեցության մեջ գտնվող մարդկանց խումբ՝ համայնքում մարդկանց միջև փոխհարաբերությունների գերակշիռ մասն իրականանում է ինֆորմացիայի փոխանակմամբ: Համայնքի անդամների միջև տեղի ունեցող փոխազդեցության հաճախակաճությունն անհամեմատ ավելի մեծ է, քան ոչ անդամների հետ ունեցած փոխազդեցությունը (այս առումով համայնական հասարակությունները կարելի է համարել փակ սոցիալական համակարգեր), ուստի համայնքի անդամների երկարատև փոխազդեցությունների ընթացքում ձևավորվում են տեղական մշակութային այնպիսի առանձնահատկություններ, որոնք ուղղորդում և կարգավորում են անդամների հետագա փոխազդեցությունները: Թեև այդ մշակույթը հիմնականում համընկնում է հասարակության դոմինանտ մշակույթին, բայց և այնպես յուրաքանչյուր համայնքում առաջանում են միայն իրեն բնորոշ առանձնահատկություններ, և այդ իմաստով հասարակության յուրաքանչյուր համայնքի մշակույթ, ունենալով մի շարք նմանություններ այլ համայնքների մշակույթներին, եզակի է իր բնույթով: Առանձնահատուկ մշակույթի առկայությունն էլ պայմանավորում է այն հանգամանքը, որ համայնքն ավելին է, քան նույն տարածքում ապրող ընտանիքների և մարդկանց մեխանիկական ամբողջությունը¹⁴:

Խոսել հասարակության որևէ տիպի մասին առանց նշելու նրան յուրահատուկ մշակութային առանձնահատկությունները, կնշանակի թվանդակային առումով ոչինչ չասել: Ընդհանրապես, սոցիալական կյանքի թղոր ոլորտներում, ցանկացած համատեղ գործունեությանն ունեցած մշակութային ձեռքբերումների արտադրության և կուտակման մեջ միշտ կարելի է առանձնացնել երկու իրարամերձ միտում, որոնք պատմական զարգացման գործընթացում դրսևորվում են տարբեր ուժգնությամբ: Մի կողմից գոյություն ունի իր բնույթով պահպանողական և կայունացնող միտում, որն արտահայտվում է այն բանում, որ նախապատվությունը տրվում է գոյություն ունեցող սոցիալական կարգի պահպանմանը: Այս միտումը միշտ հիմնված է անցյալի փորձի ճանաչման, ընդունման վրա և կողմնորոշված է դեպի անցյալը: Այս դեպքում որպես օրինակ վերցվում է անցյալի կենսափորձը, որը և դառնում է մոդել ցանկացած մարդկային գործունեության համար: Մյուս կողմից գոյություն ունի բնաշրջական կամ հեղափոխական միտում, որ ծնվում է անցյալի փորձի նկատմամբ ունեցած կասկածից ու

բ) ահիմանների որոշակիություն և կայունություն (ժամանակի և տարածության մեջ գոյատևման հարաբերականորեն բարձր կայունություն),

գ) գործունեության տարբեր տեսակների իրականացման կարողություն,

դ) կազմության արտահայտված հոմոգենություն (համասեռություն)՝ խոթի անդամներից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշների առկայություն,

ե) ներառում ավելի մեծ հանրության մեջ, որպես նրանց կառուցվածքային կազմավորում:

ի) տարբերություն խմբային հանրությունների՝ զանգվածային հանրություններն ունեն գումարային բնույթ, այդ հանրություններում անդամների ներառումը տեղի է ունենում պատահականորեն, ինչն էլ պայմանավորում է դրանց տահիմանների անորոշությունը: Այն ձևավորվում է գործառնում է այս կամ այն գործունեության շրջանակներում, չի կարող հանդես գալ որպես ավելի լայն սոցիալական հանրությունների կառուցվածքային կազմավորում: Տե՛ս «Краткий словарь по социологии», под общ. ред. Д. М. Гешвани и Н. И. Лапина, М., 1988, էջ 207-208:

¹⁴ Տե՛ս Francis E. Merill, նշվ. աշխ.:

անվատաճողությունից և միտված է գոյություն ունեցող սոցիալական կարգի փոփոխմանը: Այս միտումը հաճախ կրում է կործանիչ և հեղափոխական բնույթ, որի աղբյուրը մարդու մեջ խորապես ամրագրված ձգտումն է սոցիալական կյանքի նոր և ավելի լավ ձևերին, նոր պահանջներից համապատասխանող նոր տեխնիկային և նոր բարոյական ճշմարտություններին:

Այս միտումներն արտացոլում են երկու հիմնական պահանջմունք.

ա) ընդունված արժեքների, հմտությունների, կարողությունների, ճշմարտությունների և փորձնական տվյալների հաստատված համակարգի հիման վրա մարդկանց միջև փոխհարաբերությունները կառավարելու և կարգավորելու պահանջմունք,

բ) մարդկանց կյանքի բարելավման պահանջմունք, որն իրականացվում է բնական միջավայրի և բնության ուժերի տիրապետման, մեր ապրած աշխարհի մասին գիտելիքների մեծացման, տարերային թշնամական ուժերի ազդեցությունից պաշտպանվածության և կայուն անվտանգության ապահովման, զուտ ֆիզիկական աշխատանքային ծախսերի փոքրացման և մարդկանց միջև վստահելի համագործակցության հաստատման միջոցներով:

Ըստ այդմ, առաջին միտումը մեծ չափով դրսևորվում է այն մշակույթներում, որոնք հիմնվում են բացառապես մշակութային ժառանգության տարրերի բանավոր փոխանցման և ցուցադրման վրա, որոնք ընկալվում են անմիջականորեն, երբ փոխանցվում է մշակութային բովանդակությունը և անցյալի փորձը: Ընդհակառակը, երկրորդ միտումը գերակշռում է ճրգնածամերի և սոցիալական հեղաշրջումների, հեղափոխությունների ժամանակ, որոնք, որպես կանոն, բացում են մարդկային պատմության նոր դարաշրջաններ¹⁵: Այս միտումներից առաջինն առավել ուժգնությամբ դրսևորվում է համայնական հասարակություններում՝ ձևավորելով այնպիսի մշակույթ, որը պայմանականորեն կարելի է անվանել համայնական: Նրանում դրսևորվում է կրոնականության բարձր աստիճան, բարձրագույն արժեք են դիտվում համայնքը և նրա շահերը, որոշիչ նշանակություն է տրվում ավանդական սովորույթներին:

Համայնական մշակույթի կարևորագույն տարրեր են ավանդույթները: Ամենաընդհանուր ձևով «ավանդույթ» հասկացության տակ հասկացվում է այն ամբողջ մշակութային ժառանգությունը, որը նախորդ սերնդից փոխանցվում է հաջորդին: Հայտնի են այդ փոխանցման երկու տիպեր. 1. փոխանցում խոսքի և այլ ձայնային ազդեցությունների միջոցով, որոնք ընկալվում են լսողությամբ (օր.՝ երաժշտություն) և որոշակի գործողությունների ցուցադրմամբ, որոնք ընկալվում են տեսողությամբ, և 2. փոխանցում մեխանիկական միջոցներով՝ տպագրություն, ձայնագրություն, նկարչություն և այլն: Մշակութաբանները և ազգագրագետները սովորաբար խոսում են «ավանդական մշակույթի» մասին՝ նկատի ունենալով մշակութային այն ողջ բովանդակությունն ու արժեքները, որոնք փոխանցվում են բանավոր կերպով:

Գերմանացի ակադեմիկոս Մաքս Վեբերը, հասարակություններն իրարից տարբերելու համար որպես հասարակության ձևավորող ու փոխակերպող ուժ հիմք ընդունելով մարդկային գիտակցությունը, մտքերը, հավատալիքներն ու արժեքները, այսինքն՝ թե ինչպես են մարդիկ մտածում աշխարհի մասին, փոքր-ի՜նչ այլ մեկնաբանություն է տալիս «ավանդույթ» հասկացությանը, որին ենթարկվում էին մինչարդյունաբերական կամ համայնական հասարակությունների անդամները: Ավանդույթները, ըստ Վեբերի, սերնդեսերունդ անցած հավատալիքներ և զգացմունքներ են, ուստի ավանդական հասարակություններում սոցիալական վարքը պայմանավորված է անցյալով. մարդիկ վարվում են այս կամ այն կերպ, որովհետև այդպես ընդունված է: Ոչ կոնֆորմիստական վերաբերմունքը և նորարարությունները համայնական մշակույթում ոչ միայն չեն խրախուսվում, այլև պատմությանը հայտնի են դեպքեր, երբ կիրառվել են նույնիսկ խիստ պատժամիջոցներ՝ հաճախ ուղեկցվելով անձի համար ֆատալիստական հետևանքներով¹⁶: Ընդհակառակը, համայնական մշակույթի արժեքային հիմքը

¹⁵ Տե՛ս "Великий незнакомец: крестьяне и фермеры в современном мире", пер. с англ., М., 1992, էջ 195-199:

¹⁶ Այս իմաստով, կարելի է նշել, օրինակ, Ջ. Բրոունի դեպքը, որը, պայքարելով կրոնական դոգմների դեմ, ինչպես շատերն այդ ժամանակ, վճարեց իր կյանքով՝ այրվելով ինկվիզիցիայի կողմից: Այդ մասին տե՛ս նաև Ա. Քադդուսյան, Քաղաքացիական հասարակության հիմքերն ու հնարավորությունները Հայաստանում, Եր., 2000, Э. Дюркгейм, Самоубийство: Социологический этюд, М., 1998:

կազմող կրոնի մեջ արմատավորված բարոյականությունն իրենով պայմանավորված վարքագծի համար խոստանում է սոցիալ-հոգեբանական խրախուսանքներ (ոչ տնտեսական բնույթի), որոնք բացարձակապես գործուն են այնքան ժամանակ, քանի դեռ կենդանի է կրոնական հավատը¹⁷: Մշակութային այդօրինակ առանձնահատկություններով օժտված հասարակություններում որպես սոցիալականացման հիմնական ազենտ հանդես է գալիս համայնքը՝ ընտանիքը, հարևանները, ավագ սերունդը, եկեղեցին, որտեղ անձանց ձևավորման ողջ գործընթացն ուղեկցվում է ավանդական նորմերի, նպատակների և այդ նպատակներից հասնելու համար ավանդականորեն ընդունված միջոցների օգտագործման առաջնայնության ու անվերապահության ներշնչմամբ, և դրանով իսկ անձի մոտ որպես սոցիալական կողմնորոշիչներ ձևավորվում են ավանդական նորմերն ու արժեքները՝ պայմանավորելով նրա գործողությունների միտվածությունն առ համայնք:

Այսպիսով, համայնական հասարակությունների սոցիոլոգիական ըմբռնումը ենթադրում է համայնքի՝ որպես սոցիալական կառույցի հիմնական տարրի, սոցիալական շերտավորման համակարգի, ինչպես նաև համայնական մշակույթի ուսումնասիրություն, ինչը հնարավորություն է տալիս կառուցվածքային և բովանդակային առումով ընդհանուր պատկերացում կազմել այդ տիպի հասարակության մասին:

В. Э. СААКЯН - К вопросу о социологическом понимании общинного общества-

В социологической научной литературе существует много подходов к типологизации доиндустриальных и индустриальных обществ. К основным элементам и особенностям старого (доиндустриального) и нового (индустриального) общества обращались такие социологи, как Теннис (гемайншафт и гезельшафт), Дюркгейм (общество механической и органической солидарности), Вебер (традиционное и рациональное общество) и другие. Все типы этих обществ сводятся к двум идеальным типам - общинному и гражданскому. С этой точки зрения в статье анализируется "общинное" общество и его главные характеристики, проводится содержательный анализ понятия "община". Термин "община" впервые был употреблен в научной литературе в середине XIX века. В советской литературе под общиной понималась некая форма собственности, в частности - землевладение. В западной литературе при определении общины преобладают две тенденции. В первом случае община рассматривается как 1. группа людей, живущих на общей территории, испытывающих чувство общинной принадлежности, 2. социальная система, имеющая свои подсистемы и элементы, обеспечивающие социальные и экономические нужды членов общины, 3. наличие личных и эмоциональных связей между людьми. Сторонники второго подхода под общиной понимают не столько географическое, сколько социально-психологическое объединение людей, основой которого является единство целей и ценностей (напр., "профессиональная община", "религиозная община", "община армянской диаспоры" и т.д.). В статье рассматриваются также основные аспекты и компоненты общинной культуры.

¹⁷ Տե՛ս Մ. Վեբեր, *Избранное. Образ общества*, М., 1994, էջ 609: